ԱՎԴ2/0074/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 օգոստոսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի օգոստոսի 11-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Վասկան Գևորքի

Մոսիյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և Ժան Ղարապետի Մելքոնի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 44164422 (ԱՎԴ2/0074/01/23) քրեական վարույթը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Գ.Ստեփանյան) 2023 թվականի օգոստոսի 16-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.1. 2024 թվականի հունվարի 22-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արուս Վանոյի Կոստանդյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 44164422/2 (ԱՎԴ2/0011/01/24) քրեական վարույթը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ն.Բեգլարյան) 2024 թվականի հունվարի 25-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0011/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Հ.Պետրոսյանի՝ 2024 թվականի փետրվարի 12-ին որոշմամբ թիվ ԱՎԴ2/0011/01/24 քրեական գործը միացվել է թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական գործին և հանձնվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ.Ստեփանյանին:

2. 2024 թվականի մայիսի 17-ին թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթը վերաբաշխվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Պետրոսյանին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Վ.Գրիգորյան) 2024 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի օգոստոսի 18-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Վասկան Մոսիսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 393-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) քրոջ որդու Ժան Մելքոնի և վերջինիս նախկին կնոջ՝ Արուս Վանոյի Կոստանդյանի հետ, շահույթ ստանալու նպատակով իմքի կազմում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ իրացնելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով, 2021 թվականից մինչև 2022 թվականն ընկած ժամանակահատվածում՝ քրեական վարույթով չպարզված օրերին, «Տելեգրամ» հեռահաղորդակցության հավելվածում գործող թմրամիջոցների իրացմամբ զբաղվող «Աջիկա» կոչվող էջի՝ քննությամբ չպարզված օգտատիրոջ կողմից տեղադրված տարբեր հասցեներից «Թմրամիջոցների և հոգեմետ/հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ*

/հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ ապօրինի ձեռք են բերել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-ն որոշման N 1 հավելվածի 267-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող առանձնապես խոշոր չափերով՝ 2.5 գրամից ավելի քաշով «a-PVP» տեսակի թմրամիջոց, որն իրացման նպատակով խմբի անդամներով կշռել և փաթեթավորել են տարբեր փաթեթներում, որից հետո Վասկան Մոսիսյանն իրացման նպատակով փաթեթները տեղադրել է տարբեր հասցեներում, իսկ մնացած 2.5 գրամ քաշով «a-PVP» տեսակի թմրամիջոցը, որը փաթեթավորված է եղել 4 տարբեր փաթեթներում, հայտնաբերվել և վերցվել են ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցների կողմից 2022 թվականի ապրիլի 18-ին Վասկան Մոսիսյանի, Արուս Կոստանդյանի և Ժան Մելքոնի կողմից բնակեցված՝ դեպքի վայր հանդիսացող Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի 20-րդ փողոցի 8-րդ նրբանցքի 9/1 հասցեի բնակարանում կատարված զննության ընթացքում, որպիսի գործողությունների արդյունքում խմբի անդամներից Վասկան Մոսիսյանը յուրաքանչյուր դեպքում որպես շահույթ է ստացել 300-500 ԱՄՆ դոլարի չափով գումար, որից Ժան Մելքոնին և Արուս Կոստանդյանին հավասարաչափ փոխանցել է 50-ից 100 ԱՄՆ դոլարի չափով գումար:

(…)

Բացի այդ, Վասկան Գևորքի Մոսիսյանն առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ իրացնելու դիտավորությամբ «Տելեգրամ» հավելվածի միջոցով դեռևս քննությամբ չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ քննությամբ չպարզված օգտատիրոջից ապօրինի ձեռք է բերել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-ն որոշման N 1 հավելվածի 268-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի

նվազագույն շեմի քսանհինգապատիկից մինչև հարյուրքսանհինգապատիկը ներառող խոշոր չափերով՝ 1.25 գրամ քաշով «Մեֆեդրոն» տեսակի թմրամիջոց, որն իրացման նպատակով փաթեթավորել է պոլիէթիլենային 2 տարբեր փաթեթներում, որոնք 2022 թվականի սեպտեմբերի 29-ին ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցների կողմից Վասկան Մոսիսյանի անձնական խուզարկության ընթացքում: (…)»:

5.1. Ժան Մելքոնի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) մորեղբոր՝ Վասկան Գևորքի Մոսիսյանի և նախկին կնոջ՝ Արուս Վանոյի Կոստանդյանի հետ, խմբի կազմում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ իրացնելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով, 2021 թվականից մինչև 2022 թվականն ընկած ժամանակահատվածում՝ քրեական վարույթով չպարզված օրերին, «Տելեգրամ» հեռահաղորդակցության հավելվածում գործող թմրամիջոցների իրացմամբ զբաղվող «Աջիկա» կոչվող էջի՝ դեռևս քննությամբ չպարզված օգտատիրոջ կողմից տեղադրված տարբեր հասցեներից «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ ապօրինի ձեռք են բերել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-ն որոշման N 1 հավելվածի 267-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող առանձնապես խոշոր չափերով՝ 2.5 գրամից ավելի քաշով «α-PVP» տեսակի թմրամիջոց, որն իրացման նպատակով խմբի անդամներով կշռել և փաթեթավորել են տարբեր փաթեթներում, որից հետո Վասկան Մոսիսյանն իրացման նպատակով փաթեթները տեղադրել է տարբեր հասցեներում, իսկ մնացած 2.5 գրամ քաշով «α-PVP» տեսակի թմրամիջոցը, որը փաթեթավորված է եղել 4 տարբեր փաթեթներում, հայտնաբերվել և վերցվել են ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցների կողմից 2022 թվականի ապրիլի 18-ին Վասկան Մոսիսյանի, Արուս Կոստանդյանի և ժան Մելքոնի կողմից*

բնակեցված՝ դեպքի վայր հանդիսացող Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի 20-րդ փողոցի 8-րդ նրբանցքի 9/1 հասցեի բնակարանում կատարված զննության ընթացքում, որպիսի գործողությունների արդյունքում խմբի անդամներից Վասկան Մոսիսյանը յուրաքանչյուր դեպքում որպես շահույթ է ստացել 300-500 ԱՄՆ դոլարի չափով գումար, որից ժան Մելքոնին և Արուս Կոստանդյանին հավասարաչափ փոխանցել է 50-ից 100 ԱՄՆ դոլարի չափով գումար: (…)»[1]:

5.2. Արուս Կոստանդյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) նախկին ամուսնու՝ Ժան Մելքոնի և վերջինիս մորեղբոր՝ Վասկան Մոսիսյանի հետ, խմբի կազմում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ իրացնելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով, 2021 թվականից մինչև 2022 թվականն ընկած ժամանակահատվածում՝ քրեական վարույթով չպարզված օրերին, «Տելեգրամ» հեռահաղորդակցության հավելվածում գործող թմրամիջոցների իրացմամբ զբաղվող «Աջիկա» կոչվող էջի՝ դեռևս քննությամբ չպարզված օգտատիրոջ կողմից տեղադրված տարբեր հասցեներից «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտմամբ ապօրինի ձեռք են բերել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին ընդունված N 707-Ն որոշման N 1 հավելվածի 267-րդ կետով սահմանված թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր չափերի նվազագույն շեմի հարյուրքսանհինգապատիկը գերազանցող առանձնապես խոշոր չափերով՝ 2.5 գրամից ավելի քաշով «α-PVP» տեսակի թմրամիջոց, որն իրացման նպատակով խմբի անդամներով կշռել և փաթեթավորել են տարբեր փաթեթներում, որից հետո Վասկան Մոսիսյանն իրացման նպատակով փաթեթները տեղադրել է տարբեր հասցեներում, իսկ մնացած 2.5 գրամ քաշով «α-PVP» տեսակի թմրամիջոցը, որը փաթեթավորված է եղել 4 տարբեր փաթեթներում, հայտնաբերվել և վերցվել են*

[1] Տե՛ս թիվ ԱՎԴ2/0074/01/23 վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 148-150:

ոստիկանության Մասիսի բաժնի աշխատակիցների կողմից 2022 թվականի ապրիլի 18-ին Վասկան Մոսիսյանի, Արուս Կոստանդյանի և Ժան Մելքոնի կողմից բնակեցված՝ դեպքի վայր հանդիսացող Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի 20-րդ փողոցի 8-րդ նրբանցքի 9/1 հասցեի բնակարանում կատարված զննության ընթացքում, որպիսի գործողությունների արդյունքում խմբի անդամներից Վասկան Մոսիսյանը յուրաքանչյուր դեպքում որպես շահույթ է ստացել 300-ից 500 ԱՄՆ դոլարի չափով գումար, որից Ժան Մելքոնին և Արուս Կոստանդյանին հավասարաչափ փոխանցել է 50-ից 100 ԱՄՆ դոլարի չափով գումար: (…)»[2]*:*

6. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Պաշտպան Հովհաննես Վարդանյանը հայտնել է, որ իրավական տեսանկյունից որևէ խոչընդոտ չի տեսնում, որ գործը քննվի սույն Դատարանում, սակայն հաշվի առնելով մեղադրյալների բնակության հասցեները, այն, որ ըստ էության մեղադրյալները բնակվում են Երևանում և հարակից շրջաններում, իսկ մեղադրյալներից Արուս Կոստանդյանը աշխատում է Երևան քաղաքում, միջնորդել է քրեական գործն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հետագա տեխնիկական խնդիրներից խուսափելու և մեղադրյալների համար Դատարան ներկայանալն ավելի մատչելի դարձնելու համար:*

Մեղադրյալ Ժան Մելքոնը հայտնել է, որ համաձայն է պաշտպանի դիրքորոշմանը, հավելել է, որ իրեն ավելի հեշտ է դատական նիստերին Երևան գնալը, քանի որ բնակվում է Երևան քաղաքում:

Պաշտպան Արմեն Պողոսյանը հայտնել է, որ իր պաշտպանյալը բնակվում է Ջովունի գյուղում, որը մոտ է Երևանին և Ջովունիից այստեղ հասնելը բավականին դժվարություն է ներկայացնում, բացի այդ վերջինիս տեղափոխմանը պետք է մասնակցեն ոստիկանության աշխատակիցներ, որը հաճախ բարդություններ է առաջացնում, ու քանի որ մեղադրյալը գտնվում է տնային կալանքի տակ, ուստի

[2] Տե՛ս թիվ ԱՎԴ2/0011/01/24 վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 237-238:

նպատակահարմար է, որ դատաքննությունը փոխանցվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Մեղադրյալ Վասկան Մոսիսյանը հայտնել է, որ միանում է պաշտպանի դիրքորոշմանը, Երևան քաղաքն իրեն ավելի մոտ է և գնալ-գալը ավելի հեշտ կլինի, ցանկանում է, որ գործը քննվի Երևանում:

Պաշտպան Ալեքսան Թումասյանը հայտնել է, որ միանում է միջնորդությանը, իր պաշտպանյալ Արուս Կոստանդյանը թեև բնակվում է Վաղարշապատում, սակայն աշխատում է Երևան քաղաքում, ուստի ավելի նպատակահարմար կլինի, որ դատական նիստերը կայանան Երևան քաղաքում:

Մեղադրյալ Արուս Կոստանդյանը միացել է պաշտպանի դիրքորոշմանը:

Հանրային մեղադրող Գեղամ Մկրտչյանը հայտնել է, որ առարկում է ներկայացված միջնորդության դեմ, քանի որ ենթադրյալ դեպքը տեղի է ունեցել Արարատի մարզի վարչական տարածքում, ուստի ընդդատյա է սույն Դատարանին: Իսկ պաշտպանների կողմից վկայակոչված իրավակարգավորումը առավել քան վերաբերելի է տուժողների և վկաների մեծամասնությանը, իսկ մեղադրյալների կողմից Դատարան ներկայանալը նրանց պարտականությունն է, ուստի գտնում է, որ սույն գործը պետք է քննել այս Դատարանում:

(…)

Դատարանը եզրահանգում է, որ սույն քրեական գործը պետք է ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը կամ բնակվում են Երևան քաղաքում և հարակից տարածքներում (Կոտայքի մարզի Զովունի գյուղը հարակից է Երևան քաղաքի Դավթաշեն համայնքին), կամ աշխատում են այնտեղ, և միևնույն ժամանակ առկա է մեղադրյալների համաձայնությունը՝ գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու կապակցությամբ: Այս կապակցությամբ հիմնավոր չէ դատախազի փաստարկն առ այն, որ օրենսդրական կարգավորումը վերաբերելի է վկաներին և տուժողներին, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է «վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների

մեծամասնության բնակվելու» և «մեղադրյալների համաձայնության» առկայության կանոնները, իսկ նույն իրավական ակտի 6-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված է, որ մեղադրյալները ևս վարույթի մասնավոր մասնակիցներ են, բացի այդ, հարկ է արձանագրել, որ ըստ մեղադրական եզրակացության՝ դատակոչված են միայն մեղադրյալները, իսկ մեղադրական եզրակացություն նշված միակ այլ մասնակիցը՝ ձերբակալված Մարատ Սահակյանը, ևս հաշվառված է Երևան քաղաքի Լենինգրադի փողոցի 15/14 հասցեում:

Հետևաբար, Դատարանը եզրահանգում է, որ քրեական գործն անհրաժեշտ է փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (…)»[3]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի հուլիսի 30-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Հանրային մեղադրող Գ.Մկրտչյանը միջնորդեց քրեական գործն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, քանի որ ենթադրյալ հանցագործության դեպքերը տեղի են ունեցել Արարատի մարզի վարչական տարածքում, հետագայում Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը տարածքային ընդդատությամբ գործը փոխանցել է Երևան քաղաքի առաջին ընդհանուր իրավասության քրեական դատարան: Տվյալ քրեական գործով մասնակիցներից ընդամենը մեկ մեղադրյալն է, որ բնակվում է Երևան քաղաքում, իսկ մյուսները բնակվում են այլ մարզերում: Թեև մեղադրյալներն իրենց համաձայնությունը տվել են քրեական գործն ընդդատությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելուն, սակայն տվյալ քրեական գործը ենթակա է քննության Արարատի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում:*

---

[3] Տե՛ս թիվ ԱՎԴ2/0074/01/23 վարույթի նյութեր, հատոր 7, թերթեր 110-117:

Պատասխանելով Դատարանի հարցերին, հայտնեց, որ տվյալ քրեական գործով սույն Դատարանի կողմից հետագայում կայացվելիք բոլոր դատական ակտերը և գործողությունները իրավաչափ չեն կարող հանդիսանալ, քանի որ կկայացվեն և կիրականացվեն ոչ պատշաճ Դատարանի կողմից:

Պաշտպան Գ.Ասատրյանը հայտնեց, որ միակարծիք է հանրային մեղադրողի դիրքորոշման հետ: Հետագայում սույն Դատարանի կողմից կայացված որոշումները կարող են բեկանվել ընդդատության հիմքով:

Պաշտպան Ա.Թումասյանը հայտնեց, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշումն իրավացի է, քանի որ Դատարանը հիմք է ընդունել մեղադրյալների միջնորդությունը տվյալ որոշումը կայացնելիս և ընդդատությունը փոխել է: Մեղադրյալներից մեկը բնակվում է Երևան քաղաքում, մյուսը թեև բնակվում է Կոտայքի մարզի տարածքում, սակայն այն բավականին մոտ է Երևան քաղաքին, իսկ մյուս մեղադրյալը նախկինում, թեև միայն աշխատում էր Երևան քաղաքում, սակայն ներկայումս նաև բնակվում է այստեղ:

Պաշտպան Ա.Խառատյանը հայտնեց, որ համակարծիք է հանրային մեղադրողի դիրքորոշման հետ:

Հանրային մեղադրող Գ.Մկրտչյանը հայտնեց, որ ընդդատության որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ, այդ իսկ պատճառով չի բողոքարկվել վերադաս դատարան:

(…)

Սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական գործով ներգրավված են թվով 3 մասնավոր մասնակից, որոնցից 1 անձ բնակվում է Երևան քաղաքում, իսկ 2 անձ բնակվում է Երևան քաղաքի վարչական տարածքից դուրս:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի

դատական տարածքում: Այսինքն՝ տվյալ իրավանորմի ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

- տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ,

- եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում:

Այլ կերպ, Դատարանի գնահատմամբ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 21-ի որոշման կայացման պահի դրությամբ վերը նշված նախապայմաններից մեկը, այն է՝ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանը բացակայում է: Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ Երևան քաղաքի տարածքից դուրս, թեկուզև Երևան քաղաքին մոտ մարզում բնակվելու հանգամանքը չի կարող նույնանալ և դիտարկվել որպես Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանի առկայություն:

Անդրադառնալով քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 21-ին որոշման այն պատճառաբանությանը, որ Կոտայքի մարզի Ջովունի գյուղը հարակից է Երևան քաղաքի Դավթաշեն համայնքին, կամ մեղադրյալներից մեկը կամ մի քանիսը աշխատում են Երևան քաղաքում, ապա այս կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ քրեական գործի ընդդատության հարցը լուծելու տեսանկյունից, քանի որ Օրենսդիրը չի նախատեսում մեղադրյալների աշխատանքի վայրերով կամ դատական տարածքից դուրս, սակայն դատական տարածքին մոտ տրամաբանությամբ քրեական գործերի ընդդատության հարցը լուծելու գործիքակազմ: Հատկանշական է նաև այն, որ գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելուց հետո, դրա քննությունն իրականացվում է նույն դատարանի Ավան նստավայրում, ինչի

պայմաններում Դատարանի համար անընդունելի է այն միտքը, որ Կուրայքի մարզի Զովունի համայնքը կամ Վաղարշապատ քաղաքն առավել մոտ է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանին:

Դատարանը միաժամանակ հարկ է համարում արձանագրել, որ թե՛ հանրային մեղադրողը և թե՛ պաշտպանների մեծամասնությունը հայտնել են, որ քրեական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական Դատարանին և հետագայում Դատարանի կողմից կայացված դատական ակտերը բողոքարկելու դեպքում նշված հանգամանքի հիման վրա ակտերը կարող են բեկանվել՝ «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի» կողմից քննված չլինելու պատճառաբանությամբ: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախևառաջ հարկ է արձանագրել, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը **եռօրյա ժամկետում** որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը: Մինչդեռ, սույն դեպքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, ստանալով թիվ ԱՎԴ2/0074/01/23 վարույթը, 2024 թվականի դեկտեմբերի 10-ին որոշում է կայացրել վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին, իսկ 2025 թվականի հուլիսի 30-ին, շուրջ ութ ամիս անց, որոշում է կայացրել վերոնշյալ կանոնների խախտմամբ ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին:

Արձանագրելով հանդերձ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից վերոնշյալ կանոնների խախտմամբ

[4] Տե՛ս թիվ ԱՎԴ2/0074/01/23 վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 58-62:

ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու հանգամանքը, այնուամենայնիվ հիմք ընդունելով անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակությունը և դրա՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսանալը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթի ընդդատության հարցը ենթակա է լուծման:

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության՝ բացառելով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների բնակության վայրերի զուտ տեխնիկական հաշվառմամբ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու հնարավորությունը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը կա՛մ բնակվում են Երևան քաղաքում և հարակից տարածքներում կա՛մ աշխատում են այնտեղ, և միևնույն ժամանակ առկա է մեղադրյալների համաձայնությունը[8], որոշում է կայացրել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ սույն վարույթով ներգրավված երեք մասնավոր մասնակիցներից միայն մեկն է բնակվում Երևան քաղաքում, գտել է, որ վարույթի

---

[8] Տե՛ս թիվ ԱՎԴ2/0074/01/23 վարույթի նյութեր, հատոր 7, դատական նիստի արձանագրություն, թերթեր 106-109:

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում բնակվելու պայմանը բացակայում է[10]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալների համաձայնությամբ փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ժ.Մելքոնի, վկա Մ.Սահակյանի, երեք պաշտպանների բնակության վայրն է Երևան քաղաքը, մեղադրյալ Ա.Կոստանդյանի բնակության վայրն է՝ Արմավիրի մարզը, իսկ մեղադրյալ Վ.Մոսիսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է տնային կալանքը, որը վերջինս կրում է Կոտայքի մարզի տարածքում: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են վեց մասնավոր մասնակիցներ և մեկ վկա, որոնց մեծամասնությունը՝ հինգ անձ, բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

18. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

---

[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ2/0074/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ